

գործածենք այն գործունեայ և ամենա-
ծախ տարրը՝ որ մեզմէ ծածկուած էր
ու մենք մեզմէ գտանք . կրակ տանք այն
անպէտ դաշտերուն և հին անտառնե-
րուն՝ որ արդէն կէս մը սպառած են .
իսկ որ կրակը չկրնար եղծանել՝ մենք
զայն երկաթով եղծանենք . և ահա փո-
խանակ պրտուի և նունուֆարի՝ ուս-
կից արջնագորտը իր թոյնը կ'առնուր՝
կը տեսնենք որ հրանունկը , առուոյտը
և քաղցր ու առողջարար խոտերը կը
ծլին , կը բազմանան . կենդանեաց հո-
տեր կը խայտան այն երբեմն անկոխելի
երկրին վրայ , որոնք հոն առատ սնունդ
մը և մշտանորոգ ճարակ մը կը գտնեն ,
կը բազմանան՝ դարձեալ բազմանալու
համար . ծառայեցընենք մեզի այս նոր
օգնականներն մեր սկսած գործը լմն-
ցունելու համար . թող եզը լուծի տակ
մտած իր ուժովը և ծանրութեամբն
հերկէ զերկիրս , որ մշակութեամբ վե-
րածնանի . վերջապէս նոր բնութիւն մը
մեր ձեռքէն ելլէ :

Ա՛յ Տէր ամենակալ , քու միայն
ներկայութիւնդ հաստատ կը բռնէ զբը-
նութիւնն , ու կը պահէ տիեզերիս օ-
րինաց դաշնաւորութիւնը . դու որ յե-
թերական անշարժ գահոյից կը տեսնես
ոտքիդ տակը ամէն երկնային գնտերուն
հորովին անանց զարնուելու իրարու հետ
և առանց խառնակութեան . դու որ
հանգստեան ծոցէն ամէն վայրկեան ա-
նոնց անհուն շարժմունքը կը վերանորո-
գես , և միայնակ կը կառավարես խորին
խաղաղութեամբ այս անբաւ երկիրքս և
աշխարհները , տուր , տուր խաղաղու-
թիւն այս խռոված երկրիս , լեցուր
կրից աղմկայոյզ աղաղակը , լեցուր առ-
տուածային ձայնդ՝ որպէս զի մինչև իս-
պառ դադրին անմիաբանութիւնն ու
պատերազմը գոռոզաբար շառաչելէն :
Լստուած բարութեանց և արարիչ բռ-
լորից , քու հայրական հայեցումքդ ա-
րարչութեան ամէն արարածները կ'ընդ-
գրկեն , բայց մարդս քու արարածոցդ
լնտիրն է . քու անմահական լուսոյդ
մէկ ճառագայթովը լուսաւորած ես ա-
նոր հոգին . քու սիրոյդ հարուածովը

թափանցելով իր սիրտը՝ լեցուր զայն
քու բարութիւններովդ . այս աստուա-
ծային զգացումը ամէն տեղ սփռուելով՝
թշնամի բնաւորութիւններն հաշտեցը-
նէ . այնուհետեւ մարդ մարդէ ալ չվա-
խեր , և մարդասպան երկաթն ալ անոր
ձեռքը չզիներ . պատերազմի ամենա-
ծախ հուրը՝ ծննդոց աղբիւրն ալ չցա-
մաքեցընէր . մարդկային ազգը՝ որ հի-
մա տկարացած , կըճատած , և ծաղիկ
հասակին մէջ հնձուած է , նորէն բող-
բոջէ և անթիւ աճէ բազմանայ . բնու-
թիւնն ալ՝ որ հիմա դառն աղիտիւր
ծանրաբեռնած , անարգաւարտած ու
երեսի վրայ թողուած է , ասկէ վերջն
իր հին պողաբերութեամբը նոր կեանք
մը առնու . մենք ալ , ո՛վ Լստուած բա-
րութեանց , մենք ալ անոր կ'օգնենք ,
կը մշակենք ու անդադար կը պահպա-
նենք զայն , որպէս զի ամէն վայրկեան
քեզի երախտագիտութեան և զար-
մացման նորանոր գոհութիւններ մա-
տուցանենք :

Մարեգիոյ Լեկանի քաղաքորո- թիւնը :

Լեկանի կառավարութիւնը հորան-
տացւոյ ձեռքն է , որն որ թէպէտ զար-
մանալի շահաւետութիւն մը չունի ,
սակայն պզտի թագաւորութիւն մը կը
կազմէ , ուսկից կը կախուին Պէնդանկ
և քանի մը մանր մանր կղզիներ : Լե-
կանի սուլթանը բնիկ իշխանի մը պար-
գէեց Սալաքբա թերակղզւոյն վրայի
Ղօհօր և Պալանկի թագաւորութիւն
ները . իսկ Վանիօնկ-բինանկ կղզեակն
ալ Պադաւիոյ տէրութեան տուաւ՝ պըզ-
աի տուրք մը պահանջելով անկէ : Լս-
տէրի կղզւոյս մէջ հաստատուած է
հորանտացւոյ վաճառականութեան կե-
դրոնը , որն որ թէպէտ ազատ է բոլորու-
մին , բայց ի վերայ այսր ամենայնի Սին-
կաբուրի վաճառաշահութեանը հետ չե-
բաղդատուիր : Վանիօնկ-բինանկ կըղ-



Բնիկ Մալեցի :

զեակը՝ Պէնդանկի մօտ է և տարածութիւնն է գրեթէ տասը փարսախ երկայնութիւն և ութ ալ լայնութիւն. շատ անտառներ կան մէջը, որոնք Չինացիք կը մշակեն :

Պանգա կղզին :

Սումադրայի արևելեան կողմը կ'իյնայ Պանգա կղզին և անկէ ծովային ջրանցքով մը կը բաժնուի, որ Պանգայի նեղուց կ'ըսուի : Ըստ կղզւոյս օրէնքը

անբնակ է, որովհետև բնակիչները՝ Մալեցւոյ արշաւանքէն վախնալով, կղզւոյն ներսերը բնակած են : Մինչդուռ կամ Մինդօք գլխաւոր քաղաքը՝ մէկ փարսախ տարածութիւն ունի. բնակիչներուն կէսը Չինացի և կէսն ալ Մալեցի և հիմա 30,000^ե կը հասնին : Քօլոնկ և Քուպի անագի հանքերու մէջ 3,000^ե մինչև 4,000 Չինացիք կ'աշխատին, որոնք ան աշխատութեան դժնդակութեանը համեմատ շատ առողջ են մարմնով :

Ըստ կղզւոյս երկրաբանական կազմութիւնը նախնական ժայռերէ է, մեծագոյն լեռները կռանիթ կը բովանդակեն, իսկ պզտիկները՝ երկաթի բաղադրութեամբ կարմիր քարեր։ Ըստ լեռներուս մէջ տեղն է որ կը գտնուին անագի հանքերը։ Պանգայի մէջ բանած հանքերը միայն հիւսիսային արեւմտեան կողմն են, թէպէտ հաւանական է որ կղզւոյն միւս կողմերն ալ գտնուին։ Հանք մը գտնելէն ետեւ անոր հողը կ'առնեն կը լուան, դիւրին ըլլալով իրենց այս գործողութիւնը, ինչու որ առուակներուն թիւը շատ է կղզւոյս մէջ։ Ընտառաւորք արեւուն տաքութենէն չնեղուելու համար գիշերները միայն կը ձուլեն անագը, և ան ալ տարին մէկ անգամ։ գիշերուան մը մէջ 6,000 լիտր ծանրութեամբ անագ կը հալեցնեն, որոնք վերջէն զլաններ կը շինեն ամէն մէկը վաթսնական լիտր Պաղղիոյ ծանրութեամբ։

Պանգա գեղեցիկ նաւահանգիստներուն, ուսկից վաճառականութեան համար Սիամէն Ղաբոն երթալու մէկ հատիկ լաւագոյն ճամբան՝ իրենն է։

Եւ որովհետեւ իրեն դիրքը անանկ է որ Պոռնէյի, Սումատրայի, Ղաւայի, Սիլիւզաց, Փիլիպպեանց, Սիամի, Բնամ կայսրութեան, Չինի և Ղաբոնի մէջ տեղը կ'իյնայ, հոլանտացւոց մեծապէս օգտաւէտ կրնայ ըլլալ։

Պիլիթոն կղզին։

Պանգայի մօտ կայ նաեւ Պիլիթոն կղզին, որուն մէջ ոչ միայն անագի հանքեր կը գտնուին, այլ որ զարմանալին է, նաեւ սքանչելի երկաթահանքեր։ Բնակիչքը քաջասիրտ և յանդուգն են, անոր համար ալ ասպատակութիւններ ընելու հետ են շարունակ։ Հոլանտացւոց հոստեղի փոխարքայն ասոնց առջին առնելու համար, շատ մը սրարշաւ նաւեր շինել տուաւ, ու մէջը կէս մը տեղացի և կէս մ'ալ եւրոպացի զինեալ նաւաստիներ դնելով՝ այն ասպատակները զսպելու հետ եղաւ։

Մետեորայք կամ օդերևոյթք։

Սեպտեմբր անունը կը տրուի անխըտրաբար այն ամենայն մարմնոց և երևութից որ կ'երևան և կը ձևանան երկնքին վրայ։ Ինչպէս է որոտումը, կայծակը, անձրևը, ձիւնը, կարկուտը և ծիրանի գօտին։ Թէպէտ և ուրիշ անգամ Ռազմավիպիս էջերուն մէջ խօսած ենք¹, բայց մեր հոս խօսելիքը՝ հրեղէն գունտ ըստածներուն վրայ է, որոնք յանկարծ կ'երևան մթնոլորտին վերին կողմերը, ուր հորիզոնական դըրքով կը շարժին և անհնարին երագութեամբ մը աներևոյթ կ'ըլլան, երբեմն առանց ձայնի, երբեմն ալ մեծամեծ ճայթմունքներով, ետենէն լուսաւոր հետք մը ձգելով՝ որ քանի մը մանրերկրորդ կը տւէ։ Բնուն կարծիքը այն է՝ որ ասոնք ալ անկաստղ կամ ասուպ ըստածներուն նման ըլլան, որոնցմէ միայն իրենց մեծութեամբը, լուսոյն փայլմամբը և մէկմէկէ ունեցած հեռաւորութեամբը կը զանազանին։

Ինչուան հիմա երեւցած մետեորայից մէջ ամենէն նշանաւորը Սումատրայի արեւելեան կողմը երեւցածն է, որ հարաւային Բմերիկայի մէջ կ'իյնայ։ 1799ին նոյեմբ. 12ին առաւօտը ժամը երկուքուկիսուն այս երևոյթս տեսնուեցաւ. հազարի մը չափ գունտեր՝ որոնք ետեւէ ետեւ կանոնաւոր ընթացքով մը հիւսիսէն դէպ 'ի հարաւ կ'երթային։ () զը զով էր, երկինքն ալ պարզ։ Ըստ մետեորայքս սկզբան արեւելքէն 50 աստիճանի չափ դէպ 'ի հարաւ տարածուեցան, կամաց կամաց հորիզոնէն վեր 60 աստիճան բարձրացան, արեւելեան հիւսիսային ուղղութեամբ, և արեւելեան կողմը աղեղներ ձևացուցին դէպ 'ի հարաւ ծռած, միջօրեական գծին ուղղութիւնը պահելով։ Ըստ աղեղներէս շատը մինչև 40 աստիճան բարձրութիւն ունեցան. իսկ այլք առ հասարակ 25 կամ 30 աստիճան։ Ըստ երևութիս սկըսելու ատենը երկնքին վրայ լուսնի տը-